Հաստատված է
Պետության և իրավունքի
տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի 28. 08. 2017 թ.
նիստում (արձ. թիվ 1)
Ամբիոնի պետ՝

……
(ստորագրություն)
……
(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

(Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա)

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն 2
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն, հեռակա ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոն E-mail: pitambion@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Է. Չիբուխչյան E-mail: rmarandyan@mail.ru հեռ.099-20-20-81
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		1-ին կուրս, 2-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		**1 (մեկ)**
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ		«Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն 2» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 30 ժամ, որից 2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք, 26 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու լսարանային ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում՝ քննությամբ:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է հանրակրթական ավագ դպրոցում դասավանդվող «Հասարակագիտություն», «Համաշխարհային պատմություն» առարկաների, ինչպես նաև՝ «Պետության և իրավունքի

		տեսություն 1» դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն 2» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են ֆեոդալական պետության և իրավունքի առաջացումը Գերմանիայում:
ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է ուսանողներին մատուցել համապարփակ գիտելիքներ, մասնավորապես՝ ուսանողին սովորեցնել համաշխարհային պետաիրավական մշակույթում մեծ ներդրում կատարած միջին դարերի երկրների պետության և իրավունքի պատմությունը: Դասընթացի խնդիրներն են՝ • մշակել իրավական մտածողություն, որն անհրաժեշտ է իրավունքի կիրառման համար, • ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ պետության և իրավունքի պատմական տիպերի, աղբյուրների համակողմանի ընկալման համար, • ներկայացնել պետության և իրավունքի ծագման, ձևավորման • փուլերը, նրա առանձնահատուկ կարևորությունը հասարակության կյանքում, • ցույց տալ պետության և իրավունքի՝ որպես համաշխարհային երևույթների զարգացման և դրանց տիպերի հերթափոխի առանձնահատկությունները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***1. Կարողանա՝***		1) Վերլուծել ֆեոդալական Գերմանիայում պետության և իրավունքի ձևավորման գործընթացը, 2) Տիրապետել գերմանական կայսրության քաղաքական ապակենտրոնացման գործընթացի առանձնահատկություններին, 1356 թ. «Ոսկե կոնդակ»-ի (Բուլլա) ընդհանուր բովանդակությանը, 3) Ներկայացնել դասային-ներկայացուցչական միապետությունը Գերմանիայում, 4) Վերլուծել գերմանական բացարձակ միապետության էությունը և ներկայացնել դրան բնորոշ առանձնահատկությունները, 5) Ներկայացնել Պրուսիայում և Ավստրիայում անսահմանափակ միապետությունների հաստատման գործընթացը, 6) Վերլուծել միջնադարյան Գերմանիայի իրավունքի աղբյուրները և բնորոշ գծերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Ամբիոնի կողմից մշակված դասախոսություններ: 2. Ա.Արշակյան «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն» 2003թ. Երևան: 3. Շ.Պետության «Արտասահմանյան երկրների պետության և

		իրավունքի պատմություն» Երևան Եր.համալս.հրատ.1986թ.: 4. З.Черниловский «Всеобщая история государства и права» М.1996г.
Լրացուցիչ		1.В.Графский «История государства и права» М.2003г. 2. С.Чибиряев «История государства и права зарубежных стран» М.2002г.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Քննություն («Գերազանց», «Լավ», «Բավարար» կամ «Անբավարար»):
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100 % (ստուգված) առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:
		Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական , գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, չի դժվարանում պատասխանել, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի, գրագետ և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹ-ՅՈՒՆՆԵՐ		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:
Ներկայություն		Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:

պահանջներ **Ինքնուրույն և գործնական աշխատանքներ**		Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 4 **Ֆեոդալական պետության և իրավունքի առաջացումը Գերմանիայում** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1.Գերմանիայի ֆեոդալական պետության կազմավորումը և զարգացումը 10-12-րդ դդ.: 2.Գերմանական կայսրության քաղաքական ապակենտրոնացումը, 1356 թ. «Ոսկե կոնդակ»-ը (Բուլլա) և ֆեոդալական մասնատվածության ամրապնդումը: 3. Դասային-ներկայացուցչական միապետությունը Գերմանիայում: 4.Գերմանական բացարձակ միապետության էությունը և բնորոշ առանձնահատկությունները: 5.Անսահմանափակ միապետությունների հաստատումը Պրուսիայում և Ավստրիայում: 6. Միջնադարյան Գերմանիայի իրավունքի աղբյուրները և բնորոշ գծերը:	Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարց 6 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը և առավել խորը ուսումնասիրում միջնադարյան Գերմանիայի իրավունքի աղբյուրները և բնորոշ գծերը: Հարցեր 1-6 - անցկացվում է սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև՝ խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը:

ՀԱՐՑԱՇԱՐ

«Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության» դասընթացի քննության

1. Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության ուսումնասիրման առարկան
2. Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության ուսումնասիրման մեթոդները
3. Հին Եգիպտոսի ստրկատիրական պետության կազմավորումը և զարգացումը
4. Հին Եգիպտոսի ստրկատիրական պետության հասարակական և պետական կարգը
5. Հին Եգիպտոսի ստրկատիրական պետության իրավունքի աղբյուրները և բնորոշ գծերը
6. Շումերական քաղաք-պետությունների առաջացումը. Ուռուկագինայի ռեֆորմները
7. Բաբելոնի պետության առաջացումը, հասարակական և պետական կարգը
8. Բաբելոնի իրավունքի աղբյուրները և բնորոշ գծերը. Համմուրաբի արքայի օրենքները
9. Տոհմատիրական կարգերի քայքայումը, պետության առաջացումը հին Հնդկաստանում
10. Հին Հնդկաստանի հասարակական կարգը
11. Հին Հնդկաստանի պետական կարգը
12. Հին Հնդկաստանի իրավունքի աղբյուրներն ու բնորոշ գծերը. Մանուի օրենքները
13. Աթենքի ստրկատիրական պետության առաջացումը, հասարակական կարգը
14. Սոլոնի և Կլիսթենեսի ռեֆորմներն Աթենքում
15. Աթենքի պետական կարգը
16. Աթենքի իրավունքը և բնորոշ գծերը
17. Սպարտայի ստրկատիրական պետության առաջացումը և հասարակական կարգը
18. Սպարտայի պետական կարգը
19. Հին Հռոմի պետության և իրավունքի առաջացումը, պատմության պարբերականացումը
20. Սերվիոս Տուլիոսի ռեֆորմները հին Հռոմում, դրանց հետևանքները և նշանակությունը
21. Հին Հռոմի հասարակական կարգը հանրապետության շրջանում
22. Հին Հռոմի պետական կարգը հանրապետության շրջանում
23. Հռոմի պետական կարգը կայսրության շրջանում (պրինցիպատ և դոմինատ)
24. Հռոմեական իրավունքի զարգացման փուլերը և բնորոշ գծերը
25. Ֆրանկական պետության առաջացումը և զարգացման առանձնահատկությունները
26. «Սալիական Պրավդան»՝ որպես ֆրանկների հասարակարգի ուսումնասիրման աղբյուր
27. Ֆրանկական համայնքի ֆեոդալականացումը
28. Կառլ Մարտելի ռեֆորմները, դրանց սոցիալական նախադրյալներն ու հետևանքները
29. Ֆրանկների պետական կարգը
30. Ֆեոդալական դասային միապետությունը Ֆրանսիայում և հասարակական կարգը
31. Լյուդովիկոս 9-րդի ռեֆորմները Ֆրանսիայում
32. Դասային-ներկայացուցչական միապետության կազմավորումը Ֆրանսիայում
33. Բացարձակ միապետությունը Ֆրանսիայում և պետական կարգը 14-18-րդ դարերում
34. Միջնադարյան Ֆրանսիայի իրավունքը և բնորոշ գծերը
35. Նորմանդական նվաճումը և ֆեոդալիզմի հաստատումը Անգլիայում
36. Հենրիխ 2-րդի ռեֆորմները Անգլիայում և թագավորական իշխանության հզորացումը 11-13- րդ դդ.
37. Դասային ներկայացուցչական միապետության կազմավորումը Անգլիայում
38. 1215 թ. «Ազատությունների մեծ խարտիան»
39. Անգլիական բացարձակ միապետության էությունը և առանձնահատկությունները
40. Միջնադարյան Անգլիայի իրավունքի աղբյուրները և բնորոշ գծերը
41. Գերմանիայի ֆեոդալական պետության կազմավորումը և զարգացումը 10-12-րդ դդ.

42. Գերմանական կայսրության քաղաքական ապակենտրոնացումը. 1356 թ. «Ոսկե Կոնդակ»-ը (Բուլլա) և ֆեոդալական մասնատվածության ամրապնդումը
43. Դասային ներկայացուցչական միապետությունը Գերմանիայում
44. Գերմանական բացարձակ միապետության էությունը և բնորոշ առանձնահատկությունները
45. Անսահմանափակ միապետությունների հաստատումը Պրուսիայում և Ավստրիայում
46. Միջնադարյան Գերմանիայի իրավունքի աղբյուրները և բնորոշ գծերը
47. Արաբական խալիֆայության կազմավորումը
48. Արաբական խալիֆայության հասարկական կարգը
49. Արաբական խալիֆայության պետական կարգը
50. Մուսուլմանական իրավունքի աղբյուրները և բնորոշ գծերը
51. Իրավունքի առանձին ճյուղերի գործողությունը մահմեդական իրավունքում
52. Բուրժուական հեղափոխության նախադրյալները Անգլիայում և դրա պատճառները
53. Սահմանադրական միապետությունը Անգլիայում և հեղափոխական վերակառուցումները
54. Օ. Կրոմվելի պրոտեկտորատը Անգլիայում և 1653 թ. «Կառավարման գործիք» ակտը
55. Միապետության ռեստավրացիան անգլիայում և Հաբեաս Կորպուս ակտը
56. Պառլամենտական միապետության ձևավորումը և զարգացումը Անգլիայում
57. Ընտրական իրավունքի համակարգը Անգլիայում
58. Ֆրանսիական մեծ հեղափոխության պատճառները
59. Ֆրանսիայի 1789 թ. Սահմանադիր ժողովը
60. 1789 թ. «Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիան» Ֆրանսիայում
61. Ֆրանսիայի 1791 թ. Սահմանադրությունը
62. Միապետության տապալումը Ֆրանսիայում և Յակոբինյան դիկտատուրայի հաստատումը
63. Յակոբինյան դիկտատուրայի տապալումը Ֆրանսիայում և 1799 թ. Սահմանդրությունը
64. Անգլիական գաղութները Հյուսիսային Ամերիկայում (17-18-րդ դդ.)
65. 1776 թ. Անկախության դեկլարացիան (հռչակագիր) ԱՄՆ-ում
66. ԱՄՆ-ի 1787 թ. Սահմանադրությունը
67. ԱՄՆ-ի 1789 թ. «Իրավունքների մասին բիլը»
68. Քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ում: Սահմանադրության 18-րդ և 19-րդ լրացումները
69. ԱՄՆ-ի պետությունը և իրավունքը 1918 թ. հետո (պետական կարգը և իրավունքը)
70. 1848-49 թթ. հեղափոխությունը Գերմանիայում
71. 1850 թ. Պրուսիայի Սահմանադրությունը
72. Գերմանիայի միավորումը և 1871 թ. համագերմանական Սահմանադրությունը
73. Նոյեմբերյան հեղափոխությունը Գերմանիայում և Վայմարյան Հանրապետության հիմնումը 1919 թ.
74. Ֆաշիստական դիկտատուրայի հաստատումը Գերմանիայում և պետության ռազմականացումը
75. Գերմանիայի հետագա պետաիրավական զարգացումը 20-րդ դ. կեսերին. 1949 թ. Բոննի Սահմանադրությունը
76. Ճապոնիայի 1865 թ. բուրժուական հեղափոխությունը և 60-80-ական թթ. բարեփոխումները, 1889 թ. Սահմանադրությունը և պետական կարգը
77. Իսպանական և պորտուգալական գաղությանի նվաճումները Լատինական Ամերիկայում (16-17-րդ դդ.)
78. 1810-1826 թթ. ազատագրական պատերազմը և անկախ պետությունների կազմավորումը Լատինական Ամերիկայում
79. Առաջին սահմանադրությունները և լատինամերիկյան պետությունների զարգացումը 20-րդ դ.